Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Մեծամոր 15 նոյեմբերի 2024թ.

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-165/24» ծածկագրով հրապարակված մրցույթի գնման ընթացակարգը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար պաշտպանիչ միջոցների ձեռքբերման նպատակով սույն թվականի հոկտեմբերի 10-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-165/24» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վինդորան» ՍՊԸ-ն:

Արդյունքների ամփոփման և հայտերի գնահատման փուլում գնահատող հանձնաժողովի կողմից թիվ 2 որոշմամբ արձանագրվել է, որ մասնակցի հայտերում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ հայտը ամբողջությամբ ստորագրված չէր էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում բացակայում էր ընթացակարգի ծածկագիրը, իսկ կայքէջի հղման փոխարեն նշված էր ընկերության էլեկտրոնային փոստի հասցեն, առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը էլեկտրոնային աճուրդի համակարգ պարտադիր բեռնելու փոխարեն՝ ներկայացրել էր դիմում-հայտարարության հետ միասին:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովի կողմից որոշվել է կասեցնել հայտերի գնահատման, արդյունքների ամփոփման նիստը՝ առաջարկելով «Վինդորան» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, որի մասին մասնակիցը ծանուցվել է համակարգող քարտուղարի կողմից e-AUCTION գնումների էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով:

Սահմանված ժամկետում «Վինդորան» ՍՊԸ–ի կողմից գնահատող հանձնաժողովի թիվ 2 որոշմամբ արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել:

«Վինդորան» ՍՊԸ-ի կողմից խախտվել է ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 42-րդ կետի պահանջը (եթե սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է):

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա) պարբերությամբ՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Վինդորան» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կայացնելու հաջորդող օրն այն տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությանը և «Վինդորան» ՍՊԸ-ին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**